Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2023 թվականի նոյեմբերի 6-ի N 386-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2023 թվականի նոյեմբերի 10–ից

«50% զեղչ սև ուրբաթին» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից 10.11.2023թ-ից 01.12.2023թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից տարեկան սպասարկման միջնորդավճարով պատվիրված Visa Digital, Visa Gold, Travel, Visa Platinum, Mastercard Standard տեսակի հիմնական քարտեր, որոնք պատվիրվել են Արշավի ընթացքում:
1.3 **Քարտատեր՝** Արշավի ընթացքում թողարկված Քարտի քարտապան:
1.4 Արշավին մասնակցելու դեպքում Քարտատերն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակներում՝ 10.11.2023թ-ից մինչև 01.12.2023թ-ը ներառյալ պատվիրված Քարտերը կտրամադրվեն/կսպասարկվեն հետևյալ պայմաններով.

- Քարտերի (բացառությամբ Visa Digital տեսակի քարտերի) տարեկան սպասարկման վճարը կզեղչվի 50%-ով (այսուհետ՝ 50% զեղչ)՝ Քարտի գործողության ողջ ժամանակահատված համար (5 տարի):
- Visa Digital տեսակի քարտերը Արշավի շրջանակներում կտրամադրվեն/կսպասարկվեն անվճար Քարտի գործողության ողջ ժամանակահատվածի համար (3 տարի):

Քարտերի տրամադրման և սպասարկման այլ պայմանները սահմանված են համապատասխան Քարտի տեղեկատվական ամփոփագրով:

2.2 Արշավը չի գործում հետևյալ դեպքերում.

- Ամսական սպասարկման վճարով թողարկվող Քարտերի դեպքում,
- Թղթային PIN կոդով թողարկվող Քարտերի դեպքում,
- Նախքան Արշավը գործող Քարտի վերաթողարկման/փոխարինման դեպքում,
- 06.11.2023թ-ից մինչև 01.12.2023թ-ը Քարտը փակելու և Արշավի ընթացքում միևնույն արժույթով նույն Քարտից պատվիրելու դեպքում,

- Արշավի ընթացքում միևնույն Քարտից նույն արժույթով մեկից ավել Քարտերի թողարկման դեպքում,
- Քարտեր, որոնք ունեն տրամադրման և սպասարկման ստանդարտ պայմաններից տարբերվող պայմաններ, օրինակ տրամադրվում են փաթեթային առաջարկի, առանձին կազմակերպությունների հետ առկա համագործակցության շրջանակներում կամ այլ նմանատիպ դեպքերում...
- Սույն փաստաթղթի 1.2 կետում սահմանված Քարտերից տարբերվող այլ Քարտերի դեպքում
- Կից Քարտերի դեպքում:

2.3 50% զեղչը տարածվում է ցանկացած եղանակով (Idram&IDBank բջջային հավելված, IDBanking.am հարթակ, մասնաճյուղ, հեռախոսազանգերի կենտրոն, Բանկի կայքէջ...) Քարտերի պատվերների դեպքում:

2.4 Քարտերի գործողության ավարտից հետո կամ Քարտերի գործողության ընթացքում փոխարինման/վերաթողարկման դեպքում գործելու է տվյալ քարտատեսակի համար այդ պահին Բանկում գործող սակագները:

2.5 Քարտատերերի կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և վերջիններիս կողմից լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

2.6 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: